ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/40

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Ունիվերսալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ս. Թորոսյանի (լիազորագիր, տրված՝ 14.05.2020թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութերի և արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) շրջանակներում «Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2020թ. և 21.04.2020թ. ներկայացված (22.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/40 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Ունիվերսալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>

«Ունիվերսալ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.04.2020թ. և 21.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ունիվերսալ» ՍՊԸ-ն 25.03.2020թ. էլեկտրոնային եղանակով հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-

20/3» ծածկագրով բաց մրցույթի 4-րդ չափաբաժնին և հանդիսացել է այդ չափաբաժնի միակ մասնակիցը և առաջարկել է հնարավորինս ամենացածր մրցութային գինը:

Ընկերությունը 31.03.2020թ. ստացել է գրություն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ներկայացրած փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների մասին, որում նշված է եղել, որ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը՝ Ընկերության կողմից շտկումներ ստանալու նպատակով:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումներ կատարելու մասին» կարգի 20-րդ կետի համաձայն հստակ սահմանվում է, որ հայտերի բացման օրը և ժամը համընկնում են դրանք ներկայացնելու վերջնաժամկետին, որը տվյալ հայտի դեպքում սահմանված է եղել 25.03.2020թ. ժամը 10:00-ն, Ընկերության կողմից չի ակնկալվել նման բովանդակությամբ գրություն՝ հայտերի բացման նիստից վեց օր անց ստանալը:

Ընկերությունը նշել է, որ զբաղվում է երկաթբետոնե շինարարական իրերի արտադրությամբ և ընկերության արտադրամասը և գրասենյակային մասնաշենքը գտնվում են ՀՀ Կոտայքի մարզ, գ. Զովունի 1-ին փող. 180 հասցեում: Քանի որ երկրում, կորոնավիրուսի առկայությամբ պայմանավորված, հայտարարվել է արտակարգ դրություն, և պարետի 31.03.2020թ. N 27 որոշմամբ ամբողջությամբ արգելված է Ընկերության գործունեությունը, Ընկերությունը գնահատող հանձնաժողովի գրությունը տեսել է 02.04.2020թ. երեկոյան, երբ ստուգման նպատակով այցելել է ընկերության տարածք:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ բաժնով նախատեսված տեխնիկական բնութագրում, ինչպես նաև այն, որ հրավերով սահմանված է «լայնությունը 10 սմ», բայց Ընկերության կողմից նշվել է «լայնությունը՝ ներքևի մասում 9.2 սմ, վերևի մասում 10.7 սմ» (տես էսքիզային նախագիծը):

Հրավերով սահմանված է եղել հետևյալը. «Նախալարված երկաթբետոնե հեծան, լայնությունը 10սմ, բարձրությունը 12.5սմ, երկարությունը ոչ պակաս 220սմ + 20սմ, բոլոր չափերի թույլատրելի շեղումը բացառության երկարությանը մինչև ± 1սմ, աշխատող մասի ամրանը Ա3 դասի տրամագիծը ոչ պակաս՝ d=10մմ, խամուտների քայլը ոչ ավել 15սմ, խամուտի տրամագիծը ոչ պակաս 4մմ: Բետոնի պաշտպանիչ շերտը ոչ պակաս 2 սմ»:

Ընկերությունը 03.04.2020թ. գրություն է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթի հայտերը գնահատող հանձնաժողովին, որում նշվել է, որ Ընկերության տեխնիկական բնութագիրը ճիշտ է և համապատասխանում է հրավերի պահանջներին՝ խնդրելով մեկօրյա ժամկետը բաց թողնելը համարել հարգելի՝ ստեղծված արտակարգ ռեժիմի պատճառաբանությամբ, սակայն նշված գրությունը հանձնաժողովը չի քննարկել:

10.04.2020թ. Ընկերությունը ստացել է գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. թիվ 5-րդ որոշումը, համաձայն որի, Ընկերության հայտը համարվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժվել:

Ընկերությունը նշել է, որ առաջարկված գինը իրականում իր մեջ ընդհանրապես շահույթ չի պարունակում, նաև հավելյալ ներդրումների կարիք կա տվյալ աշխատանքը ավարտին հասցնելու համար: 5 ամիսների ընթացքում 24 000 հատ հեծանների արտադրության պատվերը կատարելու համար անհրաժեշտ են նոր սարքավորումներ, որը շատ թանկ է, իսկ արտադրական պրոցեսը աշխատատար է և դժվար, այդ է վկայում այն փաստը, որ նախորդ տարվա 5 մասնակիցներից ոչ ոք չի ցանկացել մասնակցել այս մրցույթին:

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ունիվերսալ» ՍՊԸ-ի հայտը համարել հրավերի պահանջներին համապատասխանող և փոխել իրենց որոշումը՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 ծածկագրով ընթացակարգը չկայացած համարելու մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթի 4-րդ չափաբաժնով նախատեսվում է ՀՀ ՊՆ կարիքների համար բետոնե սալեր (երկաթբետոնե կոնստրուկցիա 10x12,5x240սմ) տեսակի շինանյութի ձեռքբերում՝

- 24000 հատ բետոնե սալեր, միավորի նախահաշվային գինը 4800 ՀՀ դրամ, ընդհանուր առավելագույն գումարը՝ 115.200.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտ է ներկայացրել նշված ծածկագրով մրցույթի 4-րդ չափաբաժնին մասնակցելու համար և հայտում սահմանել է 1 միավորի համար 7800 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը՝ 187.200.000 ՀՀ դրամ, որը մրցույթի համար սահմանված առավելագույն գումարից գերազանցում է 72.000.000 ՀՀ դրամով:

Ընկերության հայտի մերժման հիմք է հանդիսացել արձանագրված անհամապատասխանությունը վերջինիս կողմից ՀՀ կառավարության 04.05.17թ. № 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չշտկելը: Գնահատող հանձնաժողովի կողմից շտկում է պահանջվել մրցույթի հրապարակված և Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, մասնավորապես՝

1. մրցույթի հրավերով սահմանված է եղել «լայնությունը 10սմ, թույլատրելի շեղումը ±1սմ», սակայն «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊ ընկերությունն իր հայտով ներկայացրել է «լայնությունը ներքևի մասում 9,2սմ, վերևի մասում 10,7սմ», որն էականորեն տարբերվում է հրավերից: Քանի որ հրավերով սահմանվել են լայնության և բարձրության հստակ չափսերը՝ համապատասխանաբար 10 և 12,5սմ և թույլատրելի շեղումը ±1սմ, ապա նշված չափսերով բետոնե սալի կտրվածքն ունենում է ուղղանկյան տեսք:

2. Ընկերության՝ 2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցմանը 24.05.2019թ. ներկայացրած հայտի նմանատիպ պատճառաբանությամբ չհամապատասխանող համարվելու վերաբերյալ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ գործարքի պահին գործող ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»

կարգի 32-րդ կետի «զ» ենթակետի համապատասխան՝ տեխնիկական բնութագիրը պետք է տրամադրեր մրցույթում հաղթող ճանաչված և 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը, իսկ «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊ ընկերությունը այդ մրցույթում իր ներկայացրած գնային առաջարկով 1-ին տեղ չէր զբաղեցրել (մասնակիցները եղել են 5 ընկերություն, «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊ ընկերության կողմից առաջարկվել է 37.800.000 գնային արժեք, որը պլանավորված գնային արժեքը գերազանցել է 12.800.000 ՀՀ դրամով):

3. Բողոք ներկայացնող ընկերության այն տեղեկատվությունը, որի շտկումը պահանջել է ոչ թե գնահատող հանձնաժողովը, այլ տեխնիկական բաժնի աշխատակից Մուրադը, որի հետ ընկերության տնօրենը հեռախոսազրույց է ունեցել և ով ընկերությանը հավաստիացրել է, որ «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊ ընկերության ներկայացրած չափսերը համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, սուտ պատճառաբանություն է, քանի որ շտկում պահանջելու իրավասությունը վերապահված է միայն գնահատող հանձնաժողովին, իսկ տեխնիկական աշխատակից Մուրադը գնահատող հանձնաժողովի հետ կապ չունի (Մուրադի կողմից այդ մասին ընկերությանը զգուշացնելու վերաբերյալ պարբերությունը արտացոլված է նաև բողոք ներկայացնողի գրության մեջ):

Պատվիրատուն հայտնել է, որ 03.04.2020թ-ին Ընկերության կողմից մրցույթի հայտերը գնահատող հանձնաժողովին ներկայացրած գրության մեջ Ընկերությունը նույնիսկ չի փորձել շտկել իր հայտով ներկայացրած տեխնիկական բնութագիրը՝ մասնավորապես «լայնությունը ներքևում 9,2սմ, վերևում 10,7սմ չափսերը» և անհիմն պնդել է իր ներկայացրած տեխնիկական բնութագրերի ու հրավերում սահմանված բնութագրերի համապատասխանությունը, նույնիսկ հարկ չհամարելով հասկանալ այն, որ հրավերում նախատեսված ±1սմ շեղումը չի նախատեսում, վերևի մասում սահմանված չափսից՝ 10սմ-ից շեղում տալ գումարելով, իսկ ներքևի մասում՝ հանելով:

Պատվիրատուն հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը գործել է գնումները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ պարետի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության գործունեությունը սահմանափակող որևիցե որոշում չի եղել և չկա: Ավելին՝ ՀՀ ՊՆ գնումների հետ կապված գործառույթների անխափան իրականացումն ապահովելու համար ՀՀ ՊՆ գնումներին մասնակցող բոլոր անձանց հնարավորություն է

տրվել մուտք գործել ՀՀ ՊՆ վարչական տարածք և ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ պահպանելով հակահամաճարակային անվտանգության պահանջները:

Պատվիրատուն նշել է, որ ինչ վերաբերում է բողոքում նշված այն մտքին, որ հայտերի բացումը տեղի է ունեցել 25.03.20թ.-ին, սակայն անհամապատասխանության շտկման վերաբերյալ Ընկերությանը ծանուցվել է 31.03.20.թ-ին, ապա նշված ծանուցումը ուղարկվել է Ընկերությանը հայտերի բացման և գնահատման հիման վրա, որը ՀՀ կառավարության 04.05.20թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով կարող է տևել 10 աշխատանքային օր:

Պատվիրատուն հայտնել է, որ անհասկանալի է նաև այն պնդումը, որ երկրում հայտարարված արտակարգ իրավիճակի հետևանքով արգելված է Ընկերության գործունեությունը և վերջինս վերոհիշյալ ծանուցումը տեսել է միայն 02.04.20թ.-ին, քանզի՝

- նախ՝ Ընկերությունը, տեղեկացված լինելով ՀՀ տարածքում գործող սահմանափակումների և մրցույթի հրավերով սահմանված պահանջների մասին, այնուամենայնիվ ներկայացրել է հայտ,

- նշված ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային համակարգի միջոցով և Ընկերության՝ գնումներին մասնակցության համար պատասխանատու անձը կարող էր դրա մասին տեղեկանալ նաև տանը մնալով, ինչպես որ դա իրականացնում են շատ մասնակիցներ, և տանը մնալով էլ ներկայացներ տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը,

- ինչպես է ստացվել, որ Ընկերության ներկայացուցիչները մինչև 02.04.20թ.-ը հնարավորություն չեն ունեցել գնալ Ընկերության տարածք, այլ դա հնարավոր է եղել միայն 02.04.20թ.-ին, այն դեպքում, երբ այդ ընթացքում արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ որևէ սահմանափակում չի հանվել:

Պատվիրատուն նշել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ընկերությանը հեռախոսազանգի միջոցով տեղեկացնելու արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ պարտավորություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հայտարարված մրցույթի հրավերը մանրամասն ուսումնասիրելու և գնման ընթացակարգին պատշաճ մասնակցելու փոխարեն Ընկերությունը անհիմն մեղադրանքներ և սուտ պատճառաբանություններ է հնչեցնում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի հասցեին, ինչն անընդունելի է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի և արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***12.02.2020թ.***:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***02.03.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ունիվերսալ» ՍՊԸ-ի 20.04.2020թ. և 21.04.2020թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1304-2020 և 29.04.2020թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման**

ենթակա տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u> <u>*www.procurement.am*</u> <u>*հասցեով գործող ինտերնետային կայքն է*</u>:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>գնումների պլանը</u>***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պարտադիր հրապարակում է տեղեկագրում</u>***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում</u>: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

<u>1) **պատասխանատու ստորաբաժանում,** և</u>

<u>2) գնումները համակարգող</u>

<u>3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:</u>

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> <u>պատասխանատու ստորաբաժանումը՝</u>**

1) <u>կազմում և հաստատում է գնման հայտը</u>, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը**: ...

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության 22.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1304-2020 գրությունը, որտեղ վերջինս հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռքբերվելիք ապրանքները ներառված են ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով հրապարակվել է:

Միաժամանակ հայտնելով, որ վերոնշյալ ապրանքները ներառված են ՀՀ պաշտպանության նախարարության 2020թ. գնումների պլանում, որը հրապարակված է տեղեկագրում (gnumner.am)՝ «Գնումների պլաններ» բաժնում՝ http://www.gnumner.am/hy/page/petakan_karavarman_marminner/25 հղումով:

Այսպիսով, ինչ վերաբերում է գրությամբ վկայակոչված այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռքբերվելիք ապրանքները ներառված են ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով հրապարակվել է, ապա սույն մասով հարկ եմ համարում նշել հետևյալը.

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված են այն դեպքերը, երբ գնումների պլանը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

Ընդ որում՝ որոշման 9-րդ կետով սահմանվում է, որ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու

աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում:

Վերը շարադրված իրավական նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ գնումների պլանի հաստատման վերաբերյալ բացառություն նախատեսվելու պայմաններում գնումների պլանի հրապարակման մասով բացառություն նախատեսված չէ և Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 9-րդ կետով հստակ սահմանված է, որ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում:

Միաժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***02.03.2020թ.***՝ ավելի ուշ, քան Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Մրցույթը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մրցույթն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող հարցերի իրավաչափությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2020թ. և 21.04.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 ծածկագրով բաց մրցույթը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**